

Մ Յ Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Է

Մ Յ Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Է

Հեռախոսի հաղորդակցութեան դիտարկումը:

Մինչև հիմայ երկու հեռախոս իրարու հետ հաղորդակցութեան մէջ մուծանելու համար կենդանի մը պէտք կար, բայց նորագոյն գիւտ մը ալ կենդանին աւելորդ բաժն է, ըստ որում հեռախոս ունեցողն պիտի կարողանայ այսուհետև ինքնին հաղորդակցութեան մէջ մանեղ ուզած անձին հետ՝ առանց կենդանին միջամտութեան պէտք ունենալու: Այս գիւտը հաստատուած է պարզ եւ շատ պարզ դրութեան մը վրայ: Չորս կոճակով փորթիկ տախտակ մըն է այս նորագիւտ գործիքը. այս չորս կոճակներէն մէկը թուոց հարիւրաւորին, երկրորդը՝ տասնաւորին, եւ երրորդը միւսւորին կը համապատասխանէ. ըսեմք թէ Թիւ 732ի հետ հաղորդակցութեան մէջ մանեղ կ'ուզենք. այն ատեն եօթն անգամ հարիւրաւորը ցուցնող կոճակը պիտի կոխենք, երեք անգամ յաջորդէն եւ երկու անգամ երրորդ կոճակը. ի վերջոյ չորրորդ կոճակին կոխելով հաղորդակցութեան կատարուած ըլլալը կը ծանուցուի այն անձին, որուն հետ խօսիլ կ'ուզէինք: Այս գիւտով ծուռած կ'ըլլայ այն խնդիրն ալ, որ շատոնց ի վեր ձեռնհաս անձանց մտադրութիւնը գրաւած էր: Այս գիւտն ալ այնչափ նշանաւոր ու կարեւոր է, որչափ է հեռախօսը, վասն զի ալ ազատած ենք անտանելի ձեւակերպութիւններէն: Չմոռնանք ըսելու որ կենդանի պէտքն բարձուելով՝ մեծածախ ծախսոց առջեւ կ'առնուի: Սպասենք:

Կորնթոսի ջրանցքը:

Կորնթոսի ջրանցքին բացուելէն (1893, Նոյ. 9էն) սկսեալ՝ «Կորնթոսի ջրանցքին բացման ընկերութեան» մուտքն եղած է մինչև տարւոյս Մայիսի վերջը՝ 50.424 Փրանք, որ յուսադրածէն ու հաշուածէն շատ քիչ է: Զարակոյս չկայ որ ամէն միայ մուտքը կ'աւելնայ եւ պիտի աւելնայ, բայց նկատութեան առնելու է, որ հինգ հարիւր Փրանքնոց՝ 40.000 փոխառութեան թղթոց 6% շահը վճարելու համար տարին 1,200.000 Փրանք պէտք է: Մոռնալու չէ նոյնպէս, որ ջրանցքը լաւ վիճակի մէջ պահելու ու ձեռնարկութեան պաշտօնէից համար՝ տարին իբր 200.000 Փրանքի ծախք մ'ալ կայ: Վերջիշեալ փոխառութեան թղթոց այս տարւան Եռուարի շահը վճարելու համար

հարկ եղաւ 50.000 Փրանքի փոխառութիւն մ'ընել: Ապագայի նկատմամբ ալ ձեռնարկութիւնը մեծ յոյս մը չի կրնար ունենալ, ինչու որ մուտքն ջրանցքին ու պաշտօնէից ծախքերն հազիւ պիտի կարենայ ծածկել: Չեռնարկութեան միմիայն յոյսն Աւստրիոյ Lloyd, Իտալիոյ Navigazione Generale Italiana ընկերութեանց վրայ է, որոնց նաւերն մինչև հիմայ այս ջրանցքէն անցնելու պէտք մը տեսած չէին:

Տ Ն Տ Ե Ս Ա Վ Ն

Մուգնիսի խմամբը ըստ զննայի:

Մոգնիսի խմամբը, Մազերը բաւականէն աւելի խնամած կ'ըլլանք, եթէ մեր գլխոյն մաքրութեան հոգ տանիր: Ստեպ պէտք է գլուխը լուալ, լաւ շփել մաքրել եւ չորցնել: Թաց մազերով բաց օդն ելել կամ օդաւանդի տեղ կենալ ոչ այնչափ մաքրուն կը քնատէ, որչափ գլխոյն: Քրանելու հետեւութիւնն է լեւիքը, որ ծակտիկները կը խուռ: Երբ մէյ մը ծակտիկները կը փակուին, մաքրու աւամատը կը չորնայ եւ մազը կը սկսի թափուիլ: Եւտուցիչ հիւանդութիւններ ալ կան՝ զ. օ. ժանտաւանդ, եւն, որ մազերուն թափուելուն պատճառ կ'ըլլան: Թափուածներուն տեղ նորէն մազ կու գայ, եթէ հիւանդութիւնն անցնի եւ ընկան զորութիւնն սկսի աւելնալ: Միայն այն ատեն թափուածին տեղ մազ չի գար, երբ արմատը չորացած է: Այս պարագայի մէջ գլխուն մորթը ողորկ ու փայլուն կ'ըլլայ: — Ամէն չափազանց աշխատութիւն, եւս առաւել հոգեկան աշխատութիւն՝ պատճառ է մազերու թափուելուն: Պատճառը յայտնի է — արեան գլուխը համախոնիրը:

Մազերը մաքրելու համար մաքուր ջուրը կը բաւէ: Որովհետեւ ամէն մարդիկ նոյնչափ չեն քրտնիր եւ նոյնչափ լեւիք չեն ունենար, ըստ հետեւորդի ալ նոյնպէս ջրոյ պէտք չունին: Ընդհանրապէս շաքարէն երկու կամ երեք անգամ մազերը լուալը բաւական է: Զօքն աւելի լաւ է այն բուսաբուր, որ կը ստացուի եղիճի արմատները խաշելով: Եղիճի արմատները մանր մանր կտրելու է եւ ջրոյ մէջ նոյն քանակութեամբ քաջակ լեցնելով ետքը եփելու, լավէ անցընելու եւ գլուխը լուալու գործածելու է: Այս բուսաբուրն երկայն ժամանակ գործածելու չէ, ապա կ'ընէ ոչ մազը կը կարծրանայ եւ դիւրաբեկ կ'ըլլայ: Այս կարծրութեան առջեւ առնելու համար՝ շաքարէն անգամ մը ձէթով օծելու եւ լաւ շփելու է:

